



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ
ՈՐՈՇՈՒՄ

« 29 » Տպրպի 2019 թվականի N 7/3

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՌԻՍԿԻ ՎՐԱ
ՀԻՄՆՎԱԾ ՀԱՄԱԼԻՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈԴԱՔԱՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԿԻՐԱԴՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հաշվեքննիչ պալատի մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի
9-րդ մասի 5-րդ կետով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

Հաստատել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ռիսկի վրա հիմնված
համալիր հարկային ստուգումների մեթոդաբանության և ռիսկայնությունը որոշող
չափանիշների կիրառության վերաբերյալ ընթացիկ եզրակացությունը՝ համաձայն
հավելվածի:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Դ. Յուրյան

Լ. ՅՈՒՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՌԻՍԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՀԱՄԱԼԻՐ ՀԱՐԿԱՅԻՆ
ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՌԻՍԿԱՅԵՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ
ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվեքննության հիմքը

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2018թ. դեկտեմբերի 12-ի թիվ 19/8 որոշում (փոփոխություններ՝ ՀՀ հաշվեքննիչ պալատի 13.02.2019թ. թիվ 3/3, 13.02.2019թ. թիվ 3/7, 18.03.2019 թիվ 5/4 որոշումներ):

Հաշվեքննության օբյեկտը

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե:

Հաշվեքննության առարկան

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ռիսկի վրա հիմնված համալիր հարկային ստուգումների մեթոդաբանության և ռիսկայնությունը որոշող չափանիշների կիրառությունը:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Հաշվեքննության կատարման ժամկետը

2019թ. հունվարի 15-ից մինչև 2019թ. մարտի 29-ը ներառյալ:

Հաշվեքննության մեթոդաբանությունը

Իրականացվել է կատարողականի հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցման, արտաքին հաստատման, վերահաշվարկի, վերակատարման և վերլուծական ընթացակարգերը:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ 2011թ. նոյեմբերի 28-ի թիվ 2923-Ա հրամանով (փոփոխություններ՝ 31.08.2012թ. թիվ 267-Ա, 30.04.2014թ. թիվ 187-Ա հրամաններ) հաստատվել է «Ռիսկային չափանիշների վրա հիմնված ստուգումների պլանավորման գործընթացի նկարագրությունը», որով կանոնակարգվում են հարկային մարմնի կողմից ռիսկային չափանիշների վրա հիմնված ստուգումների պլանավորման գործընթացի նկարագրության, հարկ վճարողների կողմից հարկային մարմին ներկայացված գնահատված հարկային հաշվարկների, հաշվետվությունների ըստ ռիսկայնության խմբերի դասակարգման, այդ խմբերից ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության հետ կապված ընդհանուր հարցերը: Ստուգումների պլանավորումը տվյալ տարում ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրությունն է՝ ռիսկերի կառավարման և ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրողականության ավտոմատացված համակարգով գնահատված հարկային հաշվարկների հիման վրա:

Հաշվեքննիչ պալատի կողմից ուսումնասիրվել են ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հունիսի 20-ի թիվ 181-Ա հրամանով հաստատված՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի կողմից 2017թ. հուլիսի 1-ից մինչև 2018թ. հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք ստուգումների ծրագիրը (այսուհետ՝ 2017-2018թթ. ստուգումների ծրագիր) և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2018թ. հունիսի 1-ի թիվ 332-Ա հրամանով հաստատված՝ 2018թ. հուլիսի 1-ից մինչև 2019թ. հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում իրականացվող համալիր հարկային ստուգումների ծրագիրը (այսուհետ՝ 2018-2019թթ. ստուգումների ծրագիր):

2018 թվականի հուլիսի 1-ից մինչև 2019 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում ստուգումների ծրագիրը կազմելու համար, դասակարգման ենթարկված 53490 տնտեսվարողների ցանկից կազմվել է 1200 տնտեսվարողների նախնական ցանկ (Հավելված 1):

Ըստ վերը նշված երկու ստուգումների ծրագրերի, հարկային մարմնի կողմից պետք է իրականացվեին ստորև նշված քանակով ստուգումները՝

Աղյուսակ 1

	2017-2018թթ. ստուգման ծրագրով նախատեսված ստուգումներ	2018-2019թթ. ստուգման ծրագրով նախատեսված ստուգումներ
Ընդամենը, որից՝	1385	1192
Բարձր ռիսկայնության խմբում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտների մոտ	1098	886
Միջին ռիսկայնության խմբում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտների մոտ	219	270
Ցածր ռիսկայնության խմբում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտների մոտ	68	36

Հարկային մարմնի կողմից ստացվել է 2018 թվականի ընթացքում իրականացված ստուգումների վերաբերյալ տեղեկատվությունը (տրամադրված տեղեկատվությամբ ներառված էին այն ստուգումները, որոնց ստուգման ակտերը կազմվել են 2018թ.-ի ընթացքում, այսուհետ՝ ստացված տեղեկատվություն)՝ հարկային մարմնի տեղեկատվական համակարգ մուտքագրված տվյալները, որում, ըստ հարկային մարմնի, ՀՀ հարկային օրենսգրքի 320-րդ հոդվածի 4-րդ և 398-րդ հոդվածի 6-րդ մասերի դրույթների կատարումն ապահովելու նպատակով ստուգման ակտերը և ուսումնասիրության արձանագրությունները հարկային մարմնի տեղեկատվական (Հարկատու-3) համակարգ մուտքագրվում են միայն անբողոքարկելի դառնալուց հետո:

Ստացված տեղեկատվության համաձայն, կատարվել են հետևյալ ԲՄ՝ ստուգումները՝

¹ Բյուջետային ստուգում՝ ԲՄ

Աղյուսակ 2.1

2017-2018թթ. ստուգման ծրագրի շրջանակներում կատարված ԲՍ ստուգումներ²

ՀՀ դրամ

	Բարձր ռիսկայնություն		Միջին ռիսկայնություն		Ցածր ռիսկայնություն		Ընդամենը	
	ԲՍ ստուգումների քանակը	Հայտնաբերված գումարը	ԲՍ ստուգումների քանակը	Հայտնաբերված գումարը	ԲՍ ստուգումների քանակը	Հայտնաբերված գումարը	ԲՍ ստուգումների քանակը	Հայտնաբերված գումարը
ԽՄՀՎ ՀՏ-վարչություն ³	159	8,729,988,652	54	1,874,455,126	21	174,291,881	234	10,778,735,659
ՓՀՎ ՀՏ-վարչություն ⁴	258	1,992,689,517	26	151,771,199	4	51,728,704	288	2,196,189,420
Ընդամենը	417	10,722,678,169	80	2,026,226,325	25	226,020,585	522	12,974,925,079

Աղյուսակ 2.2

2018-2019թթ. ստուգման ծրագրի շրջանակներում կատարված ԲՍ ստուգումներ⁵

ՀՀ դրամ

	Բարձր ռիսկայնություն		Միջին ռիսկայնություն		Ցածր ռիսկայնություն		Ընդամենը	
	ԲՍ ստուգումների քանակը	Հայտնաբերված գումարը	ԲՍ ստուգումների քանակը	Հայտնաբերված գումարը	ԲՍ ստուգումների քանակը	Հայտնաբերված գումարը	ԲՍ ստուգումների քանակը	Հայտնաբերված գումարը
ԽՄՀՎ ՀՏ-վարչություն	48	551,367,957	54	116,645,949	15	870,335,398	117	1,538,349,304
ՓՀՎ ՀՏ-վարչություն	163	177,178,856	4	2,021,734	1	-	168	179,200,590
Ընդամենը	211	728,546,813	58	118,667,683	16	870,335,398	285	1,717,549,894

2017-2018թթ. ստուգման ծրագրի շրջանակներում կատարված 522 ԲՍ ստուգումների արդյունքում հայտնաբերված գումարը կազմել է 12,974,925,079 դրամ, իսկ 2018-2019թթ. ստուգման ծրագրի շրջանակներում՝ 285 ԲՍ ստուգումների արդյունքում՝ 1,717,549,894 դրամ:

Նշված 12,974,925,079 դրամ հայտնաբերված գումարի 63%-ը կամ՝ 8,249,338,221 դրամը կազմում է ընդամենը 4 տնտեսվարողի մոտ կատարված ստուգման արդյունքում հայտնաբերված գումարները, որից միայն 6,795,630,479 դրամը՝ ընդամենը երկու տնտեսվարողի մասով: 2018-2019թթ. ստուգման ծրագրի

² Ներառվել են այն ԲՍ ստուգումների տվյալները, որոնց ստուգման սկիզբը եղել է 2017թ. հուլիսի 1-ից մինչև 2018թ. հուլիսի 1-ը ժամանակահատվածում

³ Խոշոր և միջին հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչություն

⁴ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչություն

⁵ Ներառվել են այն ԲՍ ստուգումների տվյալները, որոնց ստուգման սկիզբը եղել է 2018թ. հուլիսի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը ժամանակահատվածում

1,717,549,894 դրամ հայտնաբերված գումարի 67%-ը կամ՝ 1,145,045,432 դրամը կազմում է ընդամենը 2 տնտեսվարողի մոտ ստուգման արդյունքում հայտնաբերված գումար:

2017-2018թթ. ստուգման ծրագրի շրջանակներում կատարված ստուգումների 80%-ը (417) կատարվել են բարձր ռիսկայնության խմբում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտների մոտ, որի արդյունքում հայտնաբերված գումարը կազմում է ընդհանուր հայտնաբերված գումարի 83%-ը, իսկ 2018-2019թթ. ստուգման ծրագրի շրջանակներում ստուգումների 74%-ն է (211) կատարվել բարձր ռիսկայնության խմբում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտների մոտ, սակայն դրանց արդյունքում հայտնաբերված գումարը կազմում է ընդհանուր հայտնաբերված գումարի ընդամենը 42%-ը:

Հակառակ պատկերն է ցածր ռիսկայնության խմբում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտների մոտ կատարված ստուգումների մասով: Այսպես, եթե 2017-2018թթ. ստուգման ծրագրի շրջանակներում ցածր ռիսկայնության խմբում կատարվել է 25 ստուգում, որի արդյունքում հայտնաբերվել է 226,020,585 դրամ, ապա՝ 2018-2019թթ. ստուգման ծրագրով այս խմբում կատարվել է 16 ստուգում, որի արդյունքում հայտնաբերվել է 870,335,398 դրամ կամ գրեթե 4 անգամ ավելի:

II. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

2.1. Ստուգումների վերաբերյալ

Ստացված տեղեկատվությամբ ստուգումների ցանկում առկա են ստուգումներ, որոնց արդյունքում հայտնաբերված գումարներ առկա չեն (նշված է 0 դրամ)՝ չնայած գնահատվել են բարձր ռիսկայնության խմբի տնտեսվարողներ: 2017-2018թթ. ստուգման ծրագրով կատարված ստուգումներից 81-ի (կամ ընդհանուրի 16%-ը) դեպքում հայտնաբերված գումար առկա չէ, որից 59-ը գնահատվել էր բարձր ռիսկայնության, իսկ 2018-2019թթ. ստուգման ծրագրով՝ գումար չի հայտնաբերվել 140 տնտեսվարող սուբյեկտի մոտ (ընդհանուր ստուգումների 49.1 %-ը), որոնցից 97-ը գնահատվել էին բարձր ռիսկայնության սուբյեկտներ (Աղյուսակներ 3.1, 3.2):

Աղյուսակ 3.1

2017-2018թթ. ստուգման ծրագրի շրջանակներում 0 դրամ հայտնաբերված գումարով ԲՄ ստուգումների քանակը

	Բարձր ռիսկայնություն	Միջին ռիսկայնություն	Ցածր ռիսկայնություն	Ընդամենը
ԽՄՀՎ ՀՏ- վարչություն	24	13	7	44
ՓՀՎ ՀՏ- վարչություն	35	2	0	37
Ընդամենը	59	15	7	81

Աղյուսակ 3.2

2018-2019թթ. ստուգման ծրագրի շրջանակներում 0 դրամ հայտնաբերված գումարով ԲՄ ստուգումների քանակը

	Բարձր ռիսկայնություն	Միջին ռիսկայնություն	Ցածր ռիսկայնություն	Ընդամենը
ԽՄՀՎ ՀՏ- վարչություն	24	31	9	64
ՓՀՎ ՀՏ- վարչություն	73	2	1	76
Ընդամենը	97	33	10	140

Ստացված տեղեկատվության տվյալներում առկա են ստուգումներ, որոնց արդյունքում հայտնաբերված գումարները կազմել են մինչև 1,000,000 դրամ (առանց 0 դրամ գումարների), որոնց հիմնական մասը նույնպես գնահատված են եղել բարձր

ռիսկայնության խմբի տնտեսվարողներ (Աղյուսակներ 4.1, 4.2): Այսպես, 2017-2018թթ. ստուգման ծրագրով ստուգումներից 69-ի դեպքում հայտնաբերվել է գումար մինչև 1,000,000 դրամ, որից 55-ը կամ 80%-ը գնահատված են եղել բարձր ռիսկայնության տնտեսվարողներ: Նույն կերպ, 2018-2019թթ. ստուգման ծրագրով 49 ստուգման արդյունքում հայտնաբերվել է մինչև 1,000,000 դրամ, որից՝ 82%-ը գնահատված են եղել բարձր ռիսկայնության:

Աղյուսակ 4.1

2017-2018թթ. ստուգման ծրագրի շրջանակներում մինչև 1,000,000 դրամ (առանց 0 դրամ) հայտնաբերված գումարով ԲՄ ստուգումները

ՀՀ դրամ

	Բարձր ռիսկայնություն		Միջին ռիսկայնություն		Ցածր ռիսկայնություն		Ընդամենը	
	ստուգումների քանակը	հայտնաբերված գումարը	ստուգումների քանակը	հայտնաբերված գումարը	ստուգումների քանակը	հայտնաբերված գումարը	ստուգումների քանակը	հայտնաբերված գումարը
ԽՄՀՎ ՀՏ-վարչություն	12	5,739,115	6	2,455,195	2	1,461,575	20	9,655,885
ՓՀՎ ՀՏ-վարչություն	43	17,202,578	5	2,228,575	1	50,000	49	19,481,153
Ընդամենը	55	22,941,693	11	4,683,770	3	1,511,575	69	29,137,038

Աղյուսակ 4.2

2018-2019թթ. ստուգման ծրագրի շրջանակներում մինչև 1,000,000 դրամ (առանց 0 դրամ) հայտնաբերված գումարով ԲՄ ստուգումները

ՀՀ դրամ

	Բարձր ռիսկայնություն		Միջին ռիսկայնություն		Ցածր ռիսկայնություն		Ընդամենը	
	ստուգումների քանակը	հայտնաբերված գումարը	ստուգումների քանակը	հայտնաբերված գումարը	ստուգումների քանակը	հայտնաբերված գումարը	ստուգումների քանակը	հայտնաբերված գումարը
ԽՄՀՎ ՀՏ-վարչություն	4	1,413,289	6	2,849,022			10	4,262,311
ՓՀՎ ՀՏ-վարչություն	38	11,946,318	1	326,451			39	12,272,769
Ընդամենը	42	13,359,607	7	3,175,473	-	-	49	16,535,080

2.2. 2018 թվականի հուլիսի 1-ից մինչև 2019 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք համալիր հարկային ստուգումների ենթակա տնտեսվարող սուբյեկտների ցանկերի կազմման վերաբերյալ

2.2.1. Նախնական ցուցակից ստուգումների հանման առաջարկը չի ընդունվել

Ներկայացվել է նախնական ցուցակից հանելու 110 առաջարկ: Հանման առաջարկը 29 կազմակերպության մասով չի ընդունվել, որից 3 սուբյեկտներում կատարվել են բյուջեի ստուգումներ, ինչի արդյունքում հայտնաբերված գումարը կազմել է 324.3 հազ. դրամ:

Բյուջեի ստուգում իրականացված 3 սուբյեկտներից 2-ում ընդհանրապես հայտնաբերված գումար առկա չէ, իսկ 1-ում՝ 324.3 հազ. դրամ:

Օրինակ՝

- ՀՎՍՎ թիվ 5 բաժնի կողմից 1 սուբյեկտում իրականացվել է բյուջեի ստուգում (ընդգրկված է եղել բարձր ռիսկայնության խմբում՝ (ԱԱՀ-ի ռիսկային դասակարգիչը 7 է), որի արդյունքում հայտնաբերված գումարը կազմել է 324.3 հազ. դրամ ԱԱՀ-ի մասով:

Ցուցակից հանելու առաջարկի հիմնավորումը՝ ներառված է եղել նախորդ տարվա ստուգումների ծրագրում, սակայն ռիսկեր չեն հայտնաբերվել, ինչպես նաև կատարված վերլուծությամբ համալիր հարկային ստուգման իրականացումը չի հիմնավորվում:

- ՀՎՍՎ թիվ 1 և 9 բաժինների կողմից իրականացված բյուջեի ստուգումներից 2 կազմակերպությունում հայտնաբերված գումար առկա չէ: Տվյալ կազմակերպությունները ընդգրկված են եղել բարձր ռիսկայնության խմբում, համապատասխանաբար՝ ԱԱՀ եռամսյակային ռիսկային դասակարգիչը 1 է, իսկ տարեկան եկամուտների հաշվարկի դասակարգիչը՝ 1:

Ցուցակից հանելու առաջարկի հիմնավորումը՝

ՀՎՍՎ թիվ 1-ի մասով՝ 2014թ.-ի 4-րդ եռամսյակից մինչև 2017թ.-ի 4-րդ եռամսյակը ընկերությունը հանդիսացել է շրջանառության հարկ վճարող, իսկ 2017թ.-ի դեկտեմբեր ամսից համարվել է ԱԱՀ վճարող շրջանառության հարկի շեմը գերազանցելու հիմքով /ԱԱՀ շեմ/։ Ընկերության կողմից ներկայացված 2017թ.-ի 4-րդ եռամսյակի ԱԱՀ հաշվարկի 16.2 ա) տողում հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումար չի ավելացվել, իսկ 2017թ.-ի 4-րդ եռամսյակի ԱԱՀ-ով շրջանառությունը կազմել է 16.0 մլն դրամ:

ՀՎՍՎ թիվ 9-ի մասով՝ զբաղվել է դիստրիբյուտորի գործունեությամբ, վերջին բյուջեի ստուգումն իրականացվել է 23.11.2017թ.-ին, ներկայումս փաստացի

գործունեություն չի իրականացնում, իրացման շրջանառություններ չունի, ուստի նպատակահարմար չէ իրականացնել ՀՀՍ:

Այսինքն, նշված տնտեսվարողների մոտ ռիսկային դասակարգիչները բարձր են եղել, ցուցակից դրանց հանման առաջարկները չեն ընդունվել, սակայն բյուջետային ստուգում իրականացված 7 կազմակերպություններից 3-ում հայտնաբերված գումարը կազմել է 324. 3 հազ. դրամ, ըստ 2019 թվականի մարտի 27-ին ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված պարզաբանման մյուս երկուսը ներկայացրել են ճշտված հաշվարկներ:

2.2.2. Նախնական ցուցակից ստուգումների հանման առաջարկը ընդունվելու վերաբերյալ

Նախնական ցուցակից հանելու ներկայացված առաջարկներից 81-ը ընդունվել է, որից 17 սուբյեկտներում կատարվել են բյուջեի ստուգումներ, ինչի արդյունքում հայտնաբերված գումարը կազմել է 667,873.5 հազ. դրամ:

Ցուցակից հանելու առաջարկի հիմնավորումը 42 սուբյեկտների՝ հարկ վճարողն ընդգրկված է նաև հարկային մարմնի 2017-2018թթ.-ի և 2018թ.-ի մայիս ամսվա ստուգումների ծրագրերում, և տվյալ պահին նախապատրաստվում է ստուգման հանձնարարագրի հրապարակումը, որի մեջ 2017թ.-ն ամբողջությամբ կընդգրկվի և այդ ստուգմամբ 2017թ.-ի համար գնահատված ռիսկերն ամբողջությամբ կպարզաբանվեն:

Ցուցակից հանելու առաջարկի հիմնավորումը 2 սուբյեկտների՝ վերջին բյուջեի ստուգումը իրականացվել է 31.01.2018թ.-ին, որն ընդգրկել է մինչև 30.09.2017թ.-ը: Իրականացված վերլուծության արդյունքում համալիր հարկային ստուգման իրականացումը չի հիմնավորվում:

**Կազմակերպություններն
ընդգրկված են եղել
հարկային մարմնի 2017-
2018թթ.-ի և 2018թ.-ի մայիս
ամսվա ստուգումների
ծրագրերում կամ բյուջեի
ստուգումը իրականացվել է
31.01.2018թ.-ին, սակայն
ընդգրկվել են նաև 2018-2019
ստուգումների նախնական
ցանկում:**

Հետևաբար՝ նշված կազմակերպություններն ընդգրկված են եղել հարկային մարմնի 2017-2018թթ.-ի և 2018թ.-ի մայիս ամսվա ստուգումների ծրագրերում կամ բյուջեի ստուգումը իրականացվել է 31.01.2018թ.-ին, սակայն ընդգրկվել են նաև 2018-2019 ստուգումների նախնական ցանկում:

2.2.3. Նախնական ցուցակ ստուգումների ներառման առաջարկը չի ընդունվել

Ներկայացվել է ստուգման նախնական ցուցակում ներառել 84 կազմակերպություն: Ներկայացված կազմակերպություններից 11-ի ներառումը չի ընդունվել, սակայն 1-ում իրականացվել է բյուջեի ստուգում, ինչի արդյունքում 03.12.2018թ.-ին կազմվել է ստուգման ակտ ըստ որի հայտնաբերված գումարը կազմել է 101,514.6 հազ. դրամ, ԱԱՀ դասակարգիչը 232 է, իսկ Շահութահարկի դասակարգիչը 151 է: Ստուգումը իրականացվել է 05.06.2018թ.-ից մինչև 09.11.2018թ.-ը, ստուգման ժամանակահատվածը 01.04.2016թ.-ից մինչև 31.05.2018թ.-ը: Տվյալ սուբյեկտը ընդգրկված է եղել նախորդ ստուգումների ցուցակում:

Ցուցակ ներառելու առաջարկի հիմնավորումը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների և 2016թ.-ի շահութահարկի հաշվարկով համախառն եկամտից նվազեցումները ավել են հաշվարկվել 14,522.4 հազ. դրամի, իսկ ապրանքների, արտադրանքի իրացումից, ծառայությունների մատուցումից, հանձնարարության, կոմիսիայի և գործակալության հիմունքներով իրականացված գործարքներից, հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների, արագամաշ առարկաների, հումքի /նյութերի/ և այլ ակտիվների իրացումից հասույթների, վարձավճարների հանրագումարի /հաշվարկի 7-րդ կետի 1-ից 5-րդ և 7-րդ ենթակետի/ և հարկ վճարողի կողմից դուրս գրված հարկային հաշիվ չհամարվող հաշվարկային փաստաթղթերի, հարկային հաշիվների արժեքների /առանց անուղղակի հարկերի/ և ՀԴՄ ֆիսկալային հասույթների /առանց անուղղակի հարկերի/ համադրումից անհամապատասխանություն 16,487.7 հազ. դրամի: 2016թ.-ի 3-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկով հայտարարագրված ԱԱՀ-ի 20% դրույքաչափով հարկվող գործարքների շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարների (հաշվարկի 11Բ վանդակ) և դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների հանրագումարի համադրումից անհամապատասխանություն 28.0 հազ. դրամ:

Նշված կազմակերպության ռիսկային դասիչները բավական ցածր են, նախնական ցուցակում չի ընդգրկվել, ներառման առաջարկը չի ընդունվել, սակայն իրականացված ստուգման արդյունքում հայտնաբերված գումարը կազմել է 101,514.6 հազ. դրամ:

2.2.4. Նախնական ցուցակ ստուգումների ներառման առաջարկը ընդունվելու վերաբերյալ

Ստուգման նախնական ցուցակ ներառելու առաջարկը 73 տնտեսվարող սուբյեկտների մասով ընդունվել է: Ներառված սուբյեկտներից 25-ում իրականացվել են բյուջեի ստուգումներ, ինչի արդյունքում հայտնաբերված գումարը կազմել է 40,471.7 հազ. դրամ: Ստուգում իրականացված 25 սուբյեկտներից մեկը համարվել է ցածր, 4-ը՝ միջին, իսկ մնացածը՝ բարձր ռիսկայնության:

Տվյալ 25 սուբյեկտներից 11-ում ընդհանրապես հայտնաբերված գումար առկա չէ, 1-ում հայտնաբերված գումարը կազմել է 50.0 հազ. դրամ:

Օրինակ՝

- ՀՎՍՎ թիվ 1 բաժնի կողմից իրականացվել է 2 ստուգում: Մեկ կազմակերպության մոտ ստուգման սկիզբը եղել է 2018 թվականի նոյեմբերի 21-ը, իսկ ստուգման ակտի ամսաթիվը 28.12.2018թ. -ը, հայտնաբերված գումարը կազմել է 50.0 հազ. դրամ, ԱԱՀ դասակարգիչը 151 է, իսկ Շահութահարկի դասակարգիչը 163 է: Երկրորդ կազմակերպության մոտ ստուգման սկիզբը եղել է 2018 թվականի սեպտեմբերի 25-ը, իսկ ստուգման ակտի ամսաթիվը 05.12.2018թ. -ը, հայտնաբերված գումար առկա չէ, ԱԱՀ եռամսյակային դասակարգիչը 233 է, իսկ Շահութահարկի դասակարգիչը 235 է:

Ցուցակ ներառելու առաջարկի հիմնավորումը՝ Առաջին ընկերության մոտ նախորդ ԲՍ իրականացվել է 19.05.2016թ. մինչև 30.09.2015թ. ընկած հաշվետու ժամանակաշրջանները: Վերլուծելով 01.10.2015-31.12.2017թթ. ընկած հաշվետու ժամանակաշրջանների ԱԱՀ հաշվարկները պարզվել է, որ ընկերության մոտ առկա է ԱԱՀ գումարները ավել դեբետագրման ռիսկ. մասնավորապես ընկերությունը ԱԱՀ հաշվարկներով «ՀՀ տարածքում ձեռք բերված ապրանքներ և ծառայություններ» տողի (Բ) վանդակում արտացոլել է 44,408,854 դրամ դեբետագրման ենթակա ԱԱՀ գումար, սակայն ընկերությանը մատակարարների կողմից էլ. եղանակով դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ գումարները կազմել են 5,316,414 դրամ, ինչպես նաև ընկերության կողմից 2015թ. համար չի ներկայացվել թղթային եղանակով ձեռք բերված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններ: Այսպիսով ընկերության կողմից ներկայացված ԱԱՀ հաշվարկների և ՀՏ տեղեկատվական բազայում առկա տվյալների վերլուծության արդյունքում պարզվում է, որ առկա է 39.092.440 դրամի ավել դեբետագրման ռիսկ, որից նվազեցնելով ամսական կտրվածքով, «ԱԱՀ մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ պարբերության համաձայն, հնարավոր դեբետագրման ենթակա ԱԱՀ գումարները (ՀԴՄ կտրոններով ձեռքբերումներ ամսական 3.000.000 դրամ

ներառյալ ԱԱՀ) ստացվում է, որ ընկերությունը ավել ԱԱՀ գումար է դեբետագրել տվյալ ժամանակահատվածում 26,987,961 դրամի չափով:

2018թ. ընթացքում ընկերության կողմից ավել ԱԱՀ դեբետագրված գումարը կազմել է ընդամենը 7,971,834 դրամ:

Ընդամենը ավել դեբետագրված ԱԱՀ գումարը կազմում է 34,959,795 դրամ:

Երկրորդ կազմակերպության մասով առաջարկի հիմնավորումն է այն, որ 04.04.2012թ.-ից ստուգում չի իրականացվել, վաղեմության շեմին գտնվող իրացման շրջանառությունը կազմում է 253.9 մլն դրամ: Իրականացված վերլուծության արդյունքում առկա է ծախսերի գերհայտարարագրման ռիսկ:

- ՀՎՍՎ թիվ 2 բաժնի կողմից իրականացվել է համալիր 2 ստուգում, որոնց մոտ հայտնաբերված գումար առկա չէ: Մեկ կազմակերպության մոտ ստուգման սկիզբը եղել է 2018 թվականի հոկտեմբերի 26-ը, իսկ ստուգման ակտի ամսաթիվը 30.11.2018թ.-ը, ԱԱՀ դասակարգիչը 102 է, իսկ շահութահարկի դասակարգիչը 36 է: Երկրորդ կազմակերպության մոտ ստուգման սկիզբը եղել է 2018 թվականի հոկտեմբերի 1-ը, իսկ ստուգման ակտի ամսաթիվը 20.11.2018թ.-ը, ԱԱՀ դասակարգիչը 49 է, իսկ շահութահարկի դասակարգիչը 160 է:

Ցուցակ ներառելու առաջարկի հիմնավորումը՝ Առաջին կազմակերպության մասով, հարկային մարմին ներկայացված 2016թ.-ի շահութահարկի հաշվարկի վերլուծությունից պարզվեց, որ 2016 թվականին հաշվարկի 6-րդ աղյուսակի 1.2.4-9 և 19 տողերում նշված ակտիվների հարկային բազան (արժեքը) տարեսկզբի նկատմամբ նվազել է 125,129,132 դրամով (առանց շահութահարկի հաշվարկի 7.13 և 7.17 տողերի արժեքի): Տարվա ընթացքում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների ընդհանուր արժեքը (ներառյալ համախառն եկամտից նվազեցման ենթակա՝ չհաշվանցվող անուղղակի հարկերը) կազմել է 181466813 դրամ, ակտիվներից տարբերվող այլ ծախսերը և նվազեցումները (ԱՎՈԻՄ, ֆինանսական գործունեության հետ կապված ծախսեր, չհատուցվող հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ) կազմել է 76,852,439 դրամ, համախառն եկամտից նվազեցման ենթակա գումարի հավանական չափը կազմում է 383,448,384 դրամ: 2016թ.-ի շահութահարկի հաշվարկում ցույց է տրվել 418,430,639 դրամ համախառն եկամտից նվազեցման ենթակա ծախսեր և կորուստներ:

Արդյունքում հարկային մարմին ներկայացրած 2016թ.-ի շահութահարկի հաշվարկի 6-րդ աղյուսակում նշված ակտիվների հարկային բազաների (արժեքների) հաշվառմամբ նույն հաշվարկում հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից նվազեցումները ավել է հաշվարկվել 34,982,255 դրամի չափով:

Երկրորդ կազմակերպության մասով, 2017թ. մայիս ամսվա ԱԱՀ-ի հաշվարկով հայտարարագրված ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գումարի (հաշվարկի 9Ա վանդակ) և արտահանումների տվյալների համադրումից անհամապատասխանություն: 2017թ. մարտ ամսին օրենքով սահմանված ժամկետներում էլեկտրոնային ստորագրությամբ չվավերացված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների ներառում հաշվանցվող ԱԱՀ-ի գումարների մեջ («ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի խախտում): 2017թ. ապրիլ ամսին օրենքով սահմանված ժամկետներում էլեկտրոնային ստորագրությամբ չվավերացված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների ներառում հաշվանցվող ԱԱՀ-ի գումարների մեջ («ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի խախտում):

- ՀՎՍՎ թիվ 3 բաժնի կողմից իրականացվել է 1 համալիր ստուգում: Մեկ կազմակերպության մոտ ստուգման սկիզբը եղել է 2018 թվականի նոյեմբերի 22-ը, իսկ ստուգման ակտի ամսաթիվը 14. 12. 2018թ. -ը, հայտանաբերված գումար առկա չէ, ԱԱՀ դասակարգիչը 409 է, իսկ շահութահարկի դասակարգիչը 1727 է, ռիսկայնության խումբը ցածր:

Ցուցակ ներառելու առաջարկի հիմնավորումը՝ Հարկային մարմին ներկայացված 2017թ. հոկտեմբեր ամսվա ԱԱՀ-ի հաշվարկով հայտարարագրված ՀՀ տարածք ներմուծված ապրանքների գծով հաշվարկված (գանձված) ԱԱՀ-ի գումարը (հաշվարկի 15Բ վանդակ) 67,186 դրամով գերազանցում է երրորդ երկրներից ներմուծված ապրանքների համար ՀՀ մաքսային սահմանին գանձված և ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ապրանքների գծով հաշվարկված ԱԱՀ-ի գումարների հանրագումարին: 2017թ. հոկտեմբեր ամսվա ԱԱՀ-ի հաշվարկով հայտարարագրված ՀՀ տարածք ներմուծված ապրանքների արժեքը (հաշվարկի 15Ա վանդակ) 335,930 դրամի չափով գերազանցում է հարկ վճարողի կողմից նույն հաշվետու ժամանակաշրջանում երրորդ երկրներից ներմուծված ապրանքների մաքսային արժեքի և ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ապրանքների հարկման բազայի գումարների հանրագումարից:

- ՀՎՍՎ թիվ 6 բաժնի կողմից իրականացվել է 2 համալիր ստուգում, ինչի արդյունքում 1 սուբյեկտի մոտ հայտնաբերված գումարը կազմել է 5,660.8 հազ. դրամ մյուսի մոտ հայտնաբերված գումար առկա չէ: Երկրորդ կազմակերպության մոտ ստուգման սկիզբը եղել է 2018 թվականի սեպտեմբերի 24-ը, իսկ ստուգման ակտի ամսաթիվը 30. 10. 2018թ. -ը, ԱԱՀ եռամսյակային դասակարգիչը 5 է, իսկ շահութահարկի դասակարգիչը 94 է, ռիսկայնության խումբը՝ բարձր:

Ցուցակ ներառելու առաջարկի հիմնավորումը՝ հարկային մարմին ներկայացված 2017թ. 2-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկով հայտարարագրված ՀՀ տարածք ներմուծված ապրանքների գծով հաշվարկված (գանձված) ԱԱՀ-ի գումարը (հաշվարկի 15Բ վանդակ) 30,871 դրամով գերազանցում է երրորդ երկրներից ներմուծված ապրանքների համար ՀՀ մաքսային սահմանին գանձված և ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ապրանքների գծով հաշվարկված ԱԱՀ-ի գումարների հանրագումարին:

- ՀՎՍՎ թիվ 7 բաժնի կողմից իրականացվել է 3 ստուգում, ինչի արդյունքում 1 սուբյեկտի մոտ հայտնաբերված գումարը կազմել է 3,330.2 հազ. դրամ, մյուս 2 սուբյեկտների մոտ հայտնաբերված գումար առկա չէ: Հայտնաբերված գումար չունեցող կազմակերպություններից առաջին կազմակերպության մոտ ստուգման սկիզբը եղել է 2018 թվականի հոկտեմբերի 16-ը, իսկ ստուգման ակտի ամսաթիվը 16.11.2018թ. -ը, ԱԱՀ եռամսյակային դասակարգիչը 4 է, իսկ շահութահարկի դասակարգիչը 33 է: Երկրորդ կազմակերպության մոտ ստուգման սկիզբը եղել է 2018 թվականի հոկտեմբերի 22-ը, իսկ ստուգման ակտի ամսաթիվը 08.11.2018թ.-ը, ԱԱՀ դասակարգիչը 51 է, իսկ շահութահարկի դասակարգիչը՝ 148:

Ցուցակ ներառելու առաջարկի հիմնավորումը՝ Առաջին կազմակերպության մասով, ընկերությունը զբաղվում է շինարարական նյութերի և գործիքների մանրամեծածախ առևտրով: Ընկերությունը մանրածախ առևտրի գործունեությունը իրականացրել է 2017թ.-ին՝ 3, իսկ 2018թ.-ին՝ 4 ՀԴՄ-ների միջոցով: ՀԴՄ-ներով իրականացված շրջանառությունները ընդհանուր շրջանառության մեջ կազմել է ցածր տոկոս, մոտավորապես 10-12%, որը քիչ հավանական է և հնարավոր է իրացման և վաճառքի գների թերհայտարարագրման ռիսկի առկայություն, որը կարող է առաջացնել հարկային պարտավորությունների նվազեցում: 2017թ.-ի ընթացքում 2 դեպքով արձանագրվել է ՀԴՄ շահագործման կանոնների խախտում: Նպատակահարմար է իրականացնել ՀՀՍ:

Երկրորդ կազմակերպության մասով, կազմակերպությունը զբաղվում է հիդրոտեխնիկական կառույցների, ջրամատակարարման, կոյուղու համակարգերի նախագծման, նախագծերի փորձաքննության, ճարտարագիտական այլ գործունեությամբ և տեխնիկական խորհրդատվությամբ: Գրանցման օրվանից ԲՍ չի իրականացվել, 2015-2017թթ. իրացման շրջանառությունը կազմում է 634.4 մլն դրամ, առկա է շահութաբերության ցածր ցուցանիշ, ուստի նպատակահարմար է իրականացնել ՀՀՍ:

- ՀՎՍՎ թիվ 9 բաժնի կողմից իրականացվել է 6 ստուգում, ինչի արդյունքում 5 սուբյեկտների մոտ հայտնաբերվել է 9,681.8 հազ. դրամ, իսկ 1 սուբյեկտի մոտ հայտնաբերված գումար առկա չէ: Տվյալ կազմակերպության մոտ ստուգման սկիզբը եղել է 2018 թվականի հոկտեմբերի 3-ը, իսկ ստուգման ակտի ամսաթիվը 08.11.2018թ. -ը, ԱԱՀ եռամսյակային դասակարգիչը 23 է, իսկ շահութահարկի դասակարգիչը՝ 83, ռիսկայնության խումբը՝ բարձր:

Ցուցակ ներառելու առաջարկի հիմնավորումը՝ ընկերությունը զբաղվում է թունաքիմիկատների և պարարտանյութերի ներմուծման և վաճառքի գործունեությամբ: 2016թ-ի շահութահարկի հաշվարկում կամերալ արձանագրություններով արձանագրվել են ռիսկեր: Վերջին ԲՍ իրականացվել է 04.07.2016թ-ին, 2016-2017թթ. իրացման շրջանառությունը կազմում է 845.2 մլն դրամ, առկա են համանման պայմաններում գործող ընկերությունների շահութաբերության ցուցանիշներից զգալիորեն ցածր շահութաբերության ցուցանիշներ:

- ՀՎՍՎ թիվ 13 բաժնի կողմից իրականացվել է 3 ստուգում, ինչի արդյունքում 2 սուբյեկտի մոտ հայտնաբերվել է 6,119.5 հազ. դրամ, իսկ 1 սուբյեկտի մոտ հայտնաբերված գումար առկա չէ: Տվյալ կազմակերպության մոտ ստուգման սկիզբը եղել է 2018 թվականի հոկտեմբերի 30-ը, իսկ ստուգման ակտի ամսաթիվը 03.12.2018թ. -ը, տարեկան եկամուտների հաշվարկի դասակարգիչը 2 է, իսկ ԱԱՀ եռամսյակային դասակարգիչը 46 է, ռիսկայնության խումբը՝ բարձր:

Ցուցակ ներառելու առաջարկի հիմնավորումը՝ առկա է իրացման շրջանառության թերհայտարարագրման, սահմանված չափը գերազանցող գազի կորստի, և ԱԱՀ-ի անհիմն հաշվանցման ռիսկ: Կատարված հսկողական աշխատանքների արդյունքում արձանագրվել է ՀԴՄ կիրառության կանոնների խախտում, 2016-2018թթ. ներկայացրել է թվով 15 ճշտված հաշվարկ:

- ՀՎՍՎ թիվ 16 բաժնի կողմից իրականացվել է 3 ստուգում, ինչի արդյունքում 1 սուբյեկտի մոտ հայտնաբերվել է 3,752.1 հազ. դրամ, իսկ 2 սուբյեկտների մոտ հայտնաբերված գումար առկա չէ: Հայտնաբերված գումար չունեցող կազմակերպություններից առաջին կազմակերպության մոտ ստուգման սկիզբը եղել է 2018 թվականի հոկտեմբերի 17-ը, իսկ ստուգման ակտի ամսաթիվը 19.11.2018թ. -ը, ԱԱՀ եռամսյակային դասակարգիչը 36 է, իսկ շահութահարկի դասակարգիչը 99 է: Երկրորդ կազմակերպության մոտ ստուգման սկիզբը եղել է 2018 թվականի օգոստոսի 24-ը, իսկ ստուգման ակտի ամսաթիվը 02.10.2018թ. -ը, ԱԱՀ դասակարգիչը 57 է, իսկ շահութահարկի դասակարգիչը 216 է:

Ցուցակ ներառելու առաջարկի հիմնավորումը՝ Առաջին կազմակերպության

Նշված 12

կազմակերպությունների մասով ցանկում ներառման առաջարկները ընդունվել են, սակայն 11-ում ընդհանրապես հայտնաբերված գումար առկա չէ, մյուս 1-ում հայտնաբերված գումարը կազմել է՝ 50. 0 հազ. դրամ: ՊԵԿ-ի կողմից ներկայացված պարզաբանման նշված 11 կազմակերպություններից 7-ը, ինչպես նաև 50. 0 հազ. դրամ հայտնաբերված կազմակերպությունը, ներկայացրել են ճշտված հաշվարկներ:

մասով, ոլորտի միջին ցուցանիշից ցածր շահութաբերություն, իրականացված վերլուծությամբ գնահատվել է ռիսկային:

Երկրորդ կազմակերպության մասով, 2015թ.-ի համեմատ շահութաբերության անկում, իրականացված վերլուծությամբ գնահատվել է ռիսկային:

Հետևաբար՝ նշված 12 կազմակերպությունների մասով ցանկում ներառման առաջարկները ընդունվել են, սակայն 11-ում ընդհանրապես հայտնաբերված գումար առկա չէ, մյուս 1-ում հայտնաբերված գումարը կազմել է՝ 50. 0 հազ. դրամ, ըստ 2019 թվականի մարտի 27-ին ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված պարզաբանման նշված 11 կազմակերպություններից 7-ը, ինչպես նաև 50. 0 հազ. դրամ հայտնաբերված կազմակերպությունը, ներկայացրել են ճշտված հաշվարկներ:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Նախնական ցուցակից ստուգումների հանման առաջարկը չընդունված և նախնական ցուցակ ստուգումների ներառման առաջարկը ընդունված 13 տնտեսվարողների մոտ իրականացված բյուջետային ստուգումների արդյունքում ընդհանրապես հայտնաբերված գումար առկա չէ, իսկ 2-ում հայտնաբերված գումարը կազմել է 374,3 հազ. դրամ: 2019 թվականի մարտի 27-ին ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված պարզաբանման համաձայն նշված 13 կազմակերպություններից 9-ը, ինչպես նաև 50.0 հազ. դրամ հայտնաբերված կազմակերպությունը, ներկայացրել են ճշտված հաշվարկներ:
2. Նախնական ցուցակ ընդգրկվել են սուբյեկտներ, որոնք ընդգրկված են եղել նաև հարկային մարմնի 2017-2018թթ.-ի ստուգումների ծրագրում:
 Հաշվի առնելով վերգորյալը նպատակային արդյունավետության սկզբունքը հիմնականում պահպանվել է:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նպատակային արդյունավետության սկզբունքի պահպանումը ավելի բարձրացնելու նպատակով, առաջարկվում է.

1. Նախնական ցուցակ ստուգումների ներառման առաջարկները ընդունելը իրականացնել առավել մանրամասն ուսումնասիրությունների հիման վրա:
2. Քննարկելով անհրաժեշտության դեպքում օրենսդրական փոփոխությունների հնարավորությունը, նախնական ցուցակները կազմելիս չընդգրկել հարկային մարմնի նախորդ տարվա ստուգումների ծրագրերում ընդգրկված կազմակերպություններին, իսկ այն կազմակերպությունները, որոնք չեն ստուգվել սահմանված ժամկետում ներառել հաջորդ տարվա ստուգումների ծրագրերում:

Համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջի՝ ընթացիկ եզրակացությունը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրել ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացության վերաբերյալ այլ գրավոր տեղեկատվություն:

Հավելված 1

2018 թվականի հուլիսի 1-ից մինչև 2019 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք համալիր հարկային ստուգումների ենթակա տնտեսվարող սուբյեկտների ցանկերի կազմման վերաբերյալ

ՀՎՍՎ թիվ 1 բաժին	6017	47	43	14	5	1	-	9			6	1			5	2	50,000
ՀՎՍՎ թիվ 2 բաժին	3565	40	40	7	4			3			4	1			3	2	-
ՀՎՍՎ թիվ 3 բաժին	8650	74	78	18	7			11			16	1			15	1	-
ՀՎՍՎ թիվ 4 բաժին	5179	35	33	6	3			3			2	1			1	1	7,857,574
ՀՎՍՎ թիվ 5 բաժին	4622	30	31	5	4	1	324,304	1			2				2		
ՀՎՍՎ թիվ 6 բաժին	2939	24	22	6	1			5			5	2			3	2	5,660,820
ՀՎՍՎ թիվ 7 բաժին	1317	12	15	2	1			1			5	1			4	3	3,330,160
ՀՎՍՎ թիվ 8 բաժին	2778	33	36	3	2			1			4				4	1	1,659,339
ՀՎՍՎ թիվ 9 բաժին	2143	20	22	6	1	1	-	5			7				7	6	9,681,857
ՀՎՍՎ թիվ 10 բաժին	1181	6	7								1				1		
ՀՎՍՎ թիվ 11 բաժին	2565	16	17								2	1			1		
ՀՎՍՎ թիվ 12 բաժին	848	5	5	1				1			1				1		
ՀՎՍՎ թիվ 13 բաժին	1364	2	13								12	1			11	3	6,119,502
ՀՎՍՎ թիվ 14 բաժին	1115	10	12	3	1			2			5	1			4	1	2,360,330
ՀՎՍՎ թիվ 15 բաժին	2542	21	17	4				4									
ՀՎՍՎ թիվ 16 բաժին	2734	14	15	4				4	1	-	5				5	3	3,752,150
ՀՎՍՎ թիվ 17 բաժին	639	4	5								1				1		
ՀՎՍՎ թիվ 18 բաժին	982	6	11								6	1			5		
ՀՎՍՎ թիվ 19 բաժին	1067	6	6														
ՀՎՍՎ թիվ 20 բաժին	1243	795	764	31				31	16	667,873,557							
Ընդամենը	53490	1200	1192	110	29	3	324,304	81	17	667,873,557	84	11	0	-	73	25	40,471,732

ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմք ընդունելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասը՝ ռիսկի վրա հիմնված համալիր հարկային ստուգումների մեթոդաբանության և ռիսկայնությունը որոշող չափանիշների կիրառության նկատմամբ իրականացված հաշվեքննության արդյունքում կազմված և 18.03.2019թ-ին ՊԵԿ ներկայացված արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) վերաբերյալ հայտնում ենք.

1) արձանագրության 1-ին (ընդհանուր (այլ) տեղեկատվություն) մասում (այդ թվում՝ Աղյուսակ 2.1-ում) 2017-2018թթ. ստուգման ծրագրի շրջանակում կատարված ԲՄ ստուգումների վիճակագրության ամփոփման համար անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ 2017-2018թթ. ստուգումների ծրագրում ընդգրկված հարկ վճարողների մոտ 01.07.2017-30.06.2018թթ. ժամանակահատվածում ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 336-րդ հոդվածին համապատասխան տրված հանձնարարագրի հիման վրա 97 ստուգում փաստացի սկսվել է 2018թ-ի հուլիսի 1-ից հետո, որի արդյունքում 2017-2018թթ. ստուգումների ծրագրի հիման վրա 2018թ-ին իրականացված (ավարտված) և 05.03.2019թ-ի դրությամբ անբողոքարկելի դարձած ստուգումների արդյունքների ամփոփ վիճակագրությունը (հաշվի առած նաև ստուգումների արդյունքում արձանագրված 10.8 մլն դրամ պակասեցումների գումարը⁶) հետևյալն է.

Հարկ վճարողի հաշվառման հարկային տեսչություն-վարչությունը ծրագրի կազմման պահին	Բարձր ռիսկայնություն		Միջին ռիսկայնություն		Ցածր ռիսկայնություն		Ընդամենը	
	ԲՄ ստուգումների քանակը	Հայտնաբերված գումարը	ԲՄ ստուգումների քանակը	Հայտնաբերված գումարը	ԲՄ ստուգումների քանակը	Հայտնաբերված գումարը	ԲՄ ստուգումների քանակը	Հայտնաբերված գումարը
ԽՄՀՎ ՀՏՎ	176	8,814,003,273	70	2,530,316,191	24	174,291,881	270	11,518,611,345
ՓՀՎ ՀՏՎ	313	2,150,317,527 ⁷	30	164,331,729	6	86,119,954	350	2,400,769,210
Ընդամենը	489	10,964,320,800	100	2,694,647,920	30	260,411,835	619	13,919,380,555

Վերոնշյալը հանգեցնում է արձանագրության 1-ին (ընդհանուր (այլ) տեղեկատվություն), ինչպես նաև 2-րդ մասերի տեքստային և աղյուսակային վերլուծական հատվածների՝ 2017-2018թթ. ստուգումների ծրագրին առնչվող առանձին տվյալների (մասնավորապես, ընդամենը հայտնաբերված գումարի, ամենախոշոր հայտնաբերումների՝ ընդհանուրի մեջ տեսակարար կշռի, ընդամենը ստուգումների մեջ ըստ ռիսկայնության խմբի տեսակարար կշռի և դրանց արդյունքների տոկոսային մեծության, ստուգման արդյունքում գումարների չհայտնաբերման կամ մինչև 1.0 մլն դրամ հայտնաբերման դեպքերի քանակի և տեսակարար կշռի) փոփոխության: Միաժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ 2018թ-ի ընթացքում ավարտված մի շարք ստուգումներ (ինչպես 2017-2018թթ-ի, այնպես էլ 2018-2019թթ-ի ծրագրերի հիմքով) գտնվում են բողոքարկման փուլում (կամ դեռևս անբողոքարկելի չեն դարձել) և ներառված չեն հաշվեքննության շրջանակում պահանջված տվյալների մեջ (ինչպես քանակային, այնպես էլ հայտնաբերված գումարների առումով), իսկ վերջիններիս հաշվի առնելը կարող է զգալիորեն փոխել արձանագրությամբ հաշվարկված %-ային ցուցանիշների համեմատական պատկերը: Տվյալ առումով անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ 2017-2018թթ. ծրագրի գործողության ժամկետը 30.06.2018թ-ին լրացել է, իսկ 2018-2019թթ. ծրագիրը դեռևս գտնվում է ընթացքի մեջ, ուստի, այլ հավասար պայմաններում, 2017-2018թթ-ի ծրագրով իրականացված (ավարտված) շատ ավելի մեծ քանակի ստուգման ակտեր են դարձել անբողոքարկելի,

⁶ Աղյուսակ 2.2-ում ևս արտացոլված չէ 2018-2019թթ-ի ստուգումների ծրագրի հիման վրա իրականացված ստուգումների արդյունքում արձանագրված 0.8 մլն դրամ պակասեցումների գումարը.

⁷ «Յուրա» /ՀՎՀՀ 08803626/ ՍՊԸ-ում հարկային մարմնի 2017-2018թթ. ծրագրով նախատեսված և ՀՀ ՊԵԿ նախագահի 30.11.2017թ-ի թիվ 1013400 հանձնարարագրով իրականացված ստուգման արդյունքում 02.03.2018թ-ին կազմված ակտը (արձանագրվել է 17.2 մլն դրամ հարկային պարտավորություն) ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 10.04.2018թ-ի N21/1 որոշմամբ ճանաչվել է անվավեր, և նշանակվել է վերստուգում (ՊԵԿ նախագահի 07.05.2018թ-ի թիվ 1013400/1 հանձնարարագիր), որի արդյունքում հարկային պարտավորություններ չեն արձանագրվել – վերոնշյալը հարկ վճարողի ԱՀՔ-ում ստացել է պատշաճ գրանցում, սակայն ստուգման ակտերի դարանում չի գրանցվել, ինչն էլ տվյալ պարագայում հանգեցրել է վիճակագրական անճշտության

քան 2018-2019թթ. ծրագրի դեպքում, ինչն իր ազդեցությունն է թողնում արձանագրությամբ հաշվարկված գրեթե բոլոր համեմատական ցուցանիշների վրա,

2) արձանագրության 1-ին (ընդհանուր (այլ) տեղեկատվություն) մասի վերջին 2 պարբերությամբ նշված՝ 2017-2018թթ-ի և 2018-2019թթ-ի ստուգումների ծրագրերով պլանավորված բարձր և ցածր ռիսկայնության խմբում ընդգրկված հարկ վճարողների ստուգումների արդյունքում ընդհանուր հայտնաբերումների մեջ տեսակարար կշռի էական փոփոխությունը (բարձր ռիսկային հարկ վճարողների գծով արդյունք 2017-2018թթ-ի ծրագրով՝ 79%, 2018-2019թթ-ի ծրագրով՝ 42%) պայմանավորված է 2018-2019թթ. ստուգումների ծրագրում ընդգրկված ցածր ռիսկային ընդամենը 1 հարկ վճարողի ստուգման արդյունքում 742.4 մլն դրամ հարկային պարտավորության արձանագրման հանգամանքով, որը, որպես բացառիկ դեպք, այլ ոչ թե օրինաչափություն, համեմատական հաշվարկում հաշվի չառնելու պարագայում 2018-2019թթ. ստուգումների ծրագրով բարձր ռիսկային հարկ վճարողների գծով արդյունքը կկազմի շուրջ 75%՝ 2017-2018թթ-ի ծրագրի արդյունքների նկատմամբ գրեթե նույնական ցուցանիշ,

3) սույն գրության 1-ին կետում նշված հիմքով արձանագրության 2-րդ մասի (անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ) 2.1 կետի Աղյուսակ 3.1-ը և Աղյուսակ 4.1-ը ենթակա են վերանայման, մասնավորապես, 2017-2018թթ-ի ստուգումների ծրագրով կատարված ստուգումների արդյունքում.

ա) հայտնաբերված գումար առկա չէ 124 (կամ ընդհանուրի 20%) հարկ վճարողների դեպքում, որոնցից բարձր ռիսկային է գնահատվել 88-ը (դեպքերի 71%),

բ) մինչև 1.0 մլն դրամ (ներառյալ) հայտնաբերված գումար⁸ առկա է 87 (կամ ընդհանուրի 14%) հարկ վճարողի դեպքում, որոնցից բարձր ռիսկային է գնահատվել 72-ը (դեպքերի 83%):

Ինչ վերաբերում է բարձր ռիսկային հարկ վճարողի դեպքում ստուգման արդյունքում գումար չհայտնաբերելը կամ մինչև 1.0 մլն դրամ գումար հայտնաբերելը որպես անհամապատասխանություն գնահատելուն, ապա հայտնում ենք.

ա) ռիսկը հարկ վճարողի կողմից հարկման օբյեկտը կամ հարկման բազան թաքցնելուն կամ դրանք պակաս ցույց տալուն կամ հարկերը ճիշտ չհաշվարկելուն կամ դրանք չվճարելուն կամ հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի այլ պահանջներ չկատարելուն ուղղված գործողության կամ անգործության և դրանց արդյունքում պետությանը վնաս հասցնելու հավանականությունն է⁹, որը ստուգման արդյունքում կարող է ինչպես հաստատվել, այնպես էլ ժխտվել,

բ) մյուս կողմից, առկա տվյալներով, ստուգման նշված արդյունքները դեպքերի զգալի մասում պայմանավորված են ոչ թե գնահատված ռիսկի ժխտմամբ, այլ ստուգումների հաստատված տարեկան ծրագրի՝ օրենսգրքի 336-րդ հոդվածի 8-րդ մասին համապատասխան հրապարակվելուց հետո և (կամ) օրենսգրքի 53-54-րդ հոդվածների համաձայն ստուգման ընթացքում՝ մինչև ավարտվելը հարկ վճարողի կողմից (ճշտված) հաշվարկներ ներկայացնելու հանգամանքով, ընդ որում՝ եթե ստուգումների տարեկան ծրագրի հրապարակման օրենսդրական պահանջ սահմանվել է դեռևս 2011թ-ին՝ «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով, ապա ստուգման ընթացքում (ճշտված) հաշվարկ ներկայացնելու հնարավորություն ստեղծվել է միայն օրենսգրքով՝ 01.01.2018թ-ից հետո սկսված ստուգումների մասով: Մասնավորապես, նշվածն առավել պատկերավոր ներկայացնենք մի քանի օրինակով.

⁸ շեմն ընտրվել է հաշվեքննություն իրականացրած մասնագետների կողմից, և ենթակա է լրացուցիչ քննարկման

⁹ սահմանումն՝ ըստ ՀՀ կառավարության 25.05.2017թ-ի N570-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետի,

Ստուգումների ծրագիրը	Հարկ վճարողի անվանումը	ՀՎՀՀ	Հանձնարարագրի համարը	Ակտի ամսաթիվը	Ակտով արձանագրված պարտավորության գումարը (դրամ)	Ճշտված հաշվարկներով լրացուցիչ հայտարարագրված հարկի գումարը (դրամ)
2017-2018	Լեռնամետալուրգիայի ինստիտուտ ՓԲԸ	02507472	3000627	19.11.2018	14,509,714	130,632,475
2017-2018	Ադամիում ՍՊԸ	01003256	3000514	24.07.2018	1,759,209	155,046,128
2017-2018	Միջազգային էներգետիկ կորպորացիա ՓԲԸ	00078569	3000130	19.07.2018	0	790,341,600
2018-2019	Քեմփ Վենչուրս ՓԲԸ	00252944	3000984	09.10.2018	0	87,076,501
2018-2019	Մեդիա Ինթերնեշնլ Սերվիս ՓԲԸ	00120448	3000969	27.10.2018	0	49,020,000

Հարկ է նշել, որ ս.թ. փետրվարի 7-ից 19-ը ՊԵԿ-ում կայացած քննարկումների շրջանակում նշված կարգավորումներին անդրադարձ են կատարել նաև հարկային վարչարարության հարցերով Արժույթի միջազգային հիմնադրամի մասնագետները՝ ներկայացնելով դիրքորոշում այն մասին, որ մինչև ստուգումը կամ ստուգման ընթացքում կամավոր ճշտումների հանդեպ արտոնյալ վերաբերմունքը և ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված հարկ վճարողների ցանկի նախապես հրապարակումը խաթարում է հարկային կարգապահության բարելավմանն ուղղված ՊԵԿ-ի ջանքերը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գտնում ենք, որ հարկ վճարողի բարձր ռիսկայնության պարագայում ստուգման արդյունքում գումար չհայտնաբերելը (ակտում չարձանագրելը) կամ մինչև 1.0 մլն դրամ գումար (ներառյալ) հայտնաբերելն ինքնին չի կարող գնահատվել որպես ռիսկի վրա հիմնված համալիր հարկային ստուգումների մեթոդաբանության և (կամ) ռիսկայնությունը որոշող չափանիշների կիրառության անհամապատասխանություն, քանի դեռ չեն տարանջատվել այդպիսի արդյունքին հանգեցրած, (ճշտված) հաշվարկների ներկայացմամբ պայմանավորված դեպքերը:

Միաժամանակ, հարկ է նշել, որ ՊԵԿ-ում հստակ ջանքեր են գործադրվում ինչպես ինքնաշխատ եղանակով (առանց մարդկային գործոնի ազդեցության) ռիսկերի գնահատման, այնպես էլ ստուգումների իրականացման գործնական կարողությունների բարելավմանն ուղղությամբ, այն է՝

- ա) ՊԵԿ էլեկտրոնային կառավարման համակարգի զարգացման և կատարելագործման խորհրդի կազմում գործում է ստուգման ենթակա ռիսկային հարկ վճարողների ընտրողականության համակարգի կատարելագործման աշխատանքային խումբ, որը յուրաքանչյուր տարի աշխատանքներ է իրականացնում ռիսկերի գնահատման համակարգի (մասնավորապես, գնահատման չափանիշների ու չափորոշիչների, բանաձևերի ու մոդուլների) արդյունավետության բարձրացմանն ուղղությամբ,
- բ) համալիր հարկային ստուգումների իրականացման որակի և արդյունավետության բարձրացման նպատակով 2019թ-ին ՊԵԿ-ում կատարվել են գործառութային փոփոխություններ և, համալիր հարկային ստուգումներ այսուհետ իրականացվում են միայն մասնագիտացված ստորաբաժանման կողմից (ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչություն),
- գ) ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց աջակցության նպատակով ՀՀ ՊԵԿ նախագահի համապատասխան հրամանով հաստատվել և 2019թ-ից ամբողջական ներդրվել է համալիր հարկային ստուգումներից առաջ նախաստուգումային վերլուծության կազմակերպման գործընթացը, որն ուղղված է նախքան ստուգման գործընթացը սկսելը տեսական ու գործնական հնարավոր ռիսկերի արդյունավետ վերհանմանը և քննարկմանը (դա կնպաստի նաև տեսական ռիսկերի գործնական դիտարկման

արդյունքում ստուգման ընթացիկ անհրաժեշտության առավել արդյունավետ գնահատմանը),

4) արձանագրության 2.2.1 ենթակետում նշված՝ ստուգումների նախնական ցանկից բարձր ռիսկային 3 հարկ վճարողների հանման առաջարկը չընդունվելու, սակայն իրականացված ստուգման արդյունքում 2 դեպքում պարտավորություն չարձանագրվելու, իսկ 1 դեպքում փոքր պարտավորություն (0.3 մլն դրամ) արձանագրվելու դեպքերի մասով անհրաժեշտ է նշել, որ 2018-2019թթ. ստուգումների ծրագրի կազմման նախնական փուլում հարկային մարմնում արձանագրվել է այն հանգամանքը, որ նշված հարկ վճարողների մասով առկա են իրարամերժ գնահատականներ, այն է՝ ըստ ռիսկայնության համակարգի հարկ վճարողները համարվել են բարձր ռիսկային, իսկ ըստ ստուգող ստորաբաժանման՝ ցածր ռիսկային: Նշված պարագայում հանման առաջարկների վերաբերյալ ստուգումների պլանավորման ստորաբաժանման բացասական դիրքորոշումը պայմանավորված է եղել հարկ վճարողների ստուգման ենթակա շրջանառության մեծությամբ (ավելի քան 400.0 մլն դրամ) և հայցային վաղեմության ժամկետի լրացման շեմին գտնվող հաշվետու ժամանակաշրջանների առկայությամբ, որի արդյունքում առաջացել է 2 իրար հակասող գնահատականների գործնական պարզաբանման անհրաժեշտություն, ինչը կարող էր իրականացվել հենց ստուգման միջոցով: Տվյալ պարագայում ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ որպես անհամապատասխանություն գնահատված 3 ստուգումներից 2-ի դեպքում հանձնարարագրերի տրվելուց հետո և ստուգման ընթացքում հարկ վճարողների կողմից ներկայացվել են մի շարք ճշտված հաշվարկներ, իսկ հարկային մարմնի կողմից կիրառվող ստուգումների պլանավորման նշված մեխանիզմն ուղղված է հենց ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացմանը և հնարավոր անհամապատասխանությունների հայտնաբերմանն ու հաղթահարմանը,

5) արձանագրության 2.2.2 ենթակետում որպես անհամապատասխանություն է գնահատվել այն հանգամանքը, որ 2018-2019թթ. ստուգումների նախնական ծրագրում ընդգրկվել են հարկ վճարողներ, որոնք ընդգրկված են նախորդ՝ 2017-2018թթ. ստուգումների ծրագրի վերջին եռամսյակում, կամ որոնց ստուգումն ավարտվել է ընթացիկ տարում (2018թ.): Տվյալ պարագայում անհրաժեշտ է հաշվի առնել, որ՝

ա) օրենսգրքի 336-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն ստուգումների ծրագիրը (2018-2019թթ.) պետք է հաստատվի մինչև հունիսի 1-ը ներառյալ այն պարագայում, երբ գործող (2017-2018թթ.) ծրագիրը շարունակվում է իրականացվել մինչև հունիսի 30-ը: Հետևաբար, գործող (2017-2018թթ.) ծրագրում (վերջին եռամսյակում) հարկ վճարողի ընդգրկված լինելու հանգամանքը չի կարող մեխանիկորեն հանգեցնել հաջորդ ծրագրում (2018-2019թթ., այդ թվում՝ նախնական տարբերակում) չընդգրկման, քանի որ գործող (2017-2018թթ.) ծրագրով (վերջին եռամսյակում) պլանավորված ստուգումը կարող է և չիրականացվել (օրինակ, ստորաբաժանումների ծանրաբեռնվածության պատճառով),

բ) եթե հարկ վճարողի մոտ ստուգումն ավարտվել է 2018թ-ին (2017-2018թթ. ստուգումների ծրագիր), ապա օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն բարձր ռիսկային հանդիսանալու պարագայում տվյալ հարկ վճարողի մոտ կարող է ստուգում իրականացվել նաև 2019թ-ին:

Այսպիսով, արձանագրության 2.2.2 ենթակետում նկարագրված դեպքերը չեն կարող գնահատվել որպես անհամապատասխանություն, քանի որ հստակ պլանավորման արդյունք են, այն է՝ 2018-2019թթ. ստուգումների ծրագրից ստացված առաջարկի հիման վրա դուրս են բերվել 2017-2018թթ. ստուգումների ծրագրում (վերջին եռամսյակ) ընդգրկված միայն այն հարկ վճարողները, որոնց մոտ 2018թ-ի մայիս-հունիս ամիսներին տրվել են (պետք է տրվեին) ստուգման հանձնարարագրեր (այդ ժամանակահատվածում տրված հանձնարարագրերում ներառվում են նաև նոր կազմվող ծրագրի հիմք հանդիսացող հաշվետու ժամանակաշրջանները՝ չեզոքացնելով նոր գնահատվող ռիսկերը¹⁰): Ինչ վերաբերում է 2018թ-ին ստուգումն ավարտված հարկ վճարողին ցանկից դուրս բերելու առաջարկին, ապա այն ընդունվել է ոչ թե ստուգումը 31.01.2018թ-ին ավարտվելու, այլ ցածր շրջանառության և ռիսկերի բացակայության գնահատականի պատճառով,

¹⁰ տես նաև 6-րդ կետը

6) արձանագրության 2.2.3 ենթակետում որպես անհամապատասխանություն է գնահատվել այն հանգամանքը, որ ստուգումների 2018-2019թթ. ծրագրում ներառման 11 առաջարկներ չեն ընդունվել, որոնցից 1-ի մոտ իրականացվել է ԲՍ ստուգում և հայտնաբերվել 101.5 մլն դրամ, ընդ որում հարկ վճարողն ունեցել է ռիսկայնության բարձր միավորներ: Հայտնում ենք, որ նշված 11 հարկ վճարողներից 10-ի վերաբերյալ առաջարկները չէին կարող ընդունվել, և նշված հարկ վճարողները որևէ պարագայում չէին կարող ներառվել 2018-2019թթ. ստուգումների ծրագրում՝ օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին մասով տրված ռիսկայնության հիման վրա ստուգումների հաճախականության սահմանափակումների արդյունքում՝ անկախ ռիսկայնության միավորների մեծությունից, իսկ քննարկվող վերջին դեպքում հարկ վճարողի մոտ 2018-2019թթ. ծրագրի կազմման պահին արդեն իսկ իրականացվում էր 2017-2018թթ. ծրագրով նախատեսված համալիր հարկային ստուգում, որի մեջ 2018-2019թթ. կազմվող ծրագրի հիմք հանդիսացող 2017թ-ի հաշվետու ժամանակաշրջանն ամբողջությամբ ներառված էր, հետևաբար գնահատված ռիսկերն այդ ստուգմամբ արդեն իսկ գտնվում էին պարզաբանման փուլում, իսկ 2018-2019թթ. ստուգումների ծրագրում այդ ռիսկերի հիման վրա ընդգրկելը կնշանակեր հարկ վճարողի մոտ հետագայում ստուգման իրականացում արդեն իսկ չեզոքացված ռիսկերի հիման վրա: Հաշվի առնելով վերոնշյալը՝ արձանագրության 2.2.2 ենթակետում նկարագրված դեպքերը անմիջականորեն բխում են օրենքից և չեն կարող գնահատվել որպես անհամապատասխանություն,

7) արձանագրության 2.2.4 ենթակետում որպես անհամապատասխանություն գնահատված՝ ստուգող ստորաբաժանումների առաջարկների հիման վրա 2018-2019թթ. ստուգումների ծրագրում ներառված 12 հարկ վճարողների մոտ ստուգման (էական) արդյունքների բացակայությունը ևս հիմնականում պայմանավորված է ստուգումների հաստատված տարեկան ծրագրի՝ ՀՀ հարկային օրենսգրքի 336-րդ հոդվածի 8-րդ մասին համապատասխան հրապարակվելուց հետո և (կամ) օրենսգրքի 53-54-րդ հոդվածների համաձայն ստուգման ընթացքում՝ մինչև ավարտվելը հարկ վճարողի կողմից (ճշտված) հաշվարկներ ներկայացնելու հանգամանքով:

Այսպիսով, անհրաժեշտ է նշել, որ, ըստ էության, ՀՀ հարկային օրենսգրքի ներդրման արդյունքում հարկային ստուգումների արդյունքների գնահատումը միայն կազմված ակտերով արձանագրված պարտավորությունների հիման վրա այլևս չի արտացոլում իրական պատկերը, և այն հնարավոր է ստանալ միայն հարկ վճարողների կողմից ներկայացված ճշտված հաշվարկներով հայտարարագրված լրացուցիչ պարտավորությունների հետ համախմբման արդյունքում: